ԳԼՈՒԽ ԻԴ.

Աղերսագիր Հայոց առ Արքայ · որոնել զարձանագրութիւնս ։ Դատաստան վերստին 'ի դուռն մեծի վեզիրին ։ Խնդիր երից հետեւակ ազգաց ։ Բռնութիւն քաղաքապետին ։ Հրաման Կուսակալին Դամասկոսի ։ Նոր Կուսակալ ։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿՔՆ *և արքն՝ որոց յանձն արար Թէոդորոս Պատրիարք զհրովարտակս և եհան 'ի ճանապարհ՝ յետ թափառելոյ զաւուրս 52 հասին 'ի Կոստանդինուպոլիս և մատուցին առ Փոխանորդն Պօղոս վարդապետ զուկենկար Խաթթի Շէրիֆսն, որով եղեւ ուրախութիւն մեծ 'ի մայրաքաղաքին Հայ ժողովրդոց, եւ բարձրացան կորացեալ գլուխք Իշխանաւորաց՝ յընթեռնուլն և յիմանալն զմիտս նոցա ։ Եւ ապա գիտութեամբ մեծի գենպետին ետուն հանել զպատճէնս նոցա եւ վաւերել կնքով առնն որ կոչի՝ (Հարամէյն Մուֆէթթիշէյն), և տարեալ առանձին ետուն ընթեռնուլ Նախարարաց դրան, զի լըցցին միտք նոցին ։ Եւ յետ այնորիկ 'ի ձեռն մտերմաց օմանց հասուցին զամենեսեան առ Արքայ, և յընթեռնուլն՝ եղեւ հմուտ ճշմարտութեան, եւ առաքեաց դարձեալ արտաքս ։ Եւ ապա ըստ ազդ արարելոյ նորին Արքայի՝ մատուցին առ նա Հայք գիր աղաչանաց, թէ ահա եկին հրովարտակքն մեր յԵրուսաղէմէ · եւ յետ երից աւուրց առաքեցաւ աղերսագիրն 'ի Դուռն առ Րէիզ Էֆէնտի գրով Արքայի, և նա խնդրեաց զհրովարտակսն 'ի Հայոց, որ և մատուցին 'ի ժողով Նախարարաց, որոց ընկալեալ յարգութեամբ ընթերցան ։ Եւ հրաման 'ի Սուլթան Մահմուտ Բ · յԱրքայէ զգուշութեամբ որոնել յամենայն դիւանս Տէրութեան զարձանագրութիւնս նոցա, մինչեւ 'ի ներքին դրապահ գանձարանսն · և 'ի վերայ այսր գործոյ գրով Արքայի կարգեցաւ Սատըգ Էֆէնտի այրն երեւելի, զի մի դաւ ինչ գործեսցի 'ի դրդմանէ Յունաց ։ Ժողովեցան առ նա յամենայն դիւանաց Քարտուղարք և Քննիչք՝ իբրեւ արք 40 · և ընդ նոսա տիրացու Առաքել ։ Նախ մըտին 'ի մեծ գանձարանն և աւուրս 4 աշխատ լեալ՝ գտին*